ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Մարտ 2003)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Տնտեսական աճ: 2003 թ. հունվար-մարտին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 11.3%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 3.7 տոկոսային կետ), արդյունաբերության (3.0) և զուտ անուղղակի հարկերի (2.0) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2003 թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 103.9%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թ. մարտին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.5%-ով անկում՝ հիմնականում «Ձու», «Միրգ», «Բանջարեղեն և կարտոֆիլ», «Հացամթերք» և «Կաթնամթերք» ապրանքախմբերի համապատասխանաբար՝ 7.4%, 5.1%, 1.8%, 0.2% և 1.4%-ով նվազման հաշվին:

2002 թ. դեկտեմբերի համեմատ գների ընդհանուր մակարդակի աճը կազմել է 2.1%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 2.45 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.01 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -0.39 տոկոսային կետը: Բնականոն սղաճի բացասական մակարդակը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ձու» և «Ձկնամթերք» ապրանքախմբերը, որոնք պատճառ են դարձել մարտ ամսվա գների անկման զգալի մասի, ընդգրկված են բնականոն սղաճի հաշվարկում:

2003 թ. հունվար-մարտին, 2002 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 103.4%, իսկ մարտին, 2002 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 103.2%:

Արտաքին հատված: 2003 թ. հունվար – մարտին ապրանքների արտահանման ծավալը (FOB գներով) կազմել է 132.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 10.6 %-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում արտահանման մեջ շուրջ 56 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի 1.1 անգամ աճով:

Ապրանքների ներմուծման ծավալը (CIF գներով) կազմել է 256.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 25.6%-ով: Ընդ որում, այստեղ նույնպես աճը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման մեջ շուրջ 27.8 % կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալի 83.3% աճով:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն աճել է 12.1%-ով, իսկ ներմուծումը՝ 12%-ով:

Արդյունքում, 2003 թ. հունվար – մարտ ամիսներին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 46.9 %-ով (իսկ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի՝ 11.9%-ով) և կազմել 123.9 մլն ԱՄՆ դոլար:

2003 թ. հունվար – մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 586.6 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 3.4%-ով: Մարտ ամսվա փոխարժեքը կազմել է 590.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով 0.7%-ով:

Պետական բյուջե: Պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները մարտին կազմել են 22.0 մլրդ դրամ՝ ծրագրված 22.9 մլրդ դրամի փոխարեն, իսկ հարկային եկամուտները՝ 21.7 մլրդ դրամ՝ ծրագրված 21.4 մլրդ դրամի փոխարեն: Հարկային եկամուտների հավաքագրումն ընթացել է եռամսյակի վերջին ամսվան բնորոշ սեզոնայնությամբ, այն է՝ գրանցվել է հարկային եկամուտների ավելի բարձր մակարդակ, քան եռամսյակի նախորդ ամիսների ընթացքում: Այսպես, մարտի հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 988 մլն դրամ՝ հունվար և փետրվար ամիսների համապատասխանաբար՝ 479 մլն դրամի և 455 մլն դրամի և նախորդ տարվա մարտի 779 մլն դրամի փոխարեն: Հատկանշական է, որ մարտ ամսին ևս հարկերի հավաքագրումը անհամաչափ ընթացք է ունեցել. ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ցուցանիշի 37.6%-ը (փետրվարին՝ 30%, հունվարին՝ 36.5%):

Ծախսերը կազմել են 19.2 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 22.0 մլրդ դրամի փոխարեն: Շեղումը պայմանավորվել է ոչ հարկային եկամուտների թերակատարմամբ, դրամաշնորհների թերստացմամբ և ծրագրվածի համեմատությամբ Գանձապետական միասնական հաշվում միջոցների ավել կուտակմամբ: Արդյունքում, բյուջեի հավելուրդը կազմել է 2.8 մլրդ դրամ՝ ծրագրված 0.9 մլրդ դրամի փոխարեն: Այն

[1] *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշների աղբյուրը ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003 թ. հունվար-մարտին» պարբերականի նախագիծն է:*

ձևավորվել է հետևյալ աղբյուրների՝ պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 1.0 մլրդ դրամ զուտ մուտքերի, 1.0 մլրդ դրամ արտաքին վարկերի մարման, միասնական հաշվում 2.9 մլրդ դրամ կուտակման և 0.1 մլրդ դրամ մուրհակների մարման հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պահանջը ամսվա ընթացքում նվազել է 3.2 մլրդ դրամով և կազմել 13.5 մլրդ դրամ (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները):

Դրամավարկային քաղաքականություն: Համաձայն 2003 թ. դրամավարկային քաղաքականության ծրագրի եռամսյակային բաշխվածության՝ փողի բազան մարտի վերջին պետք է կազմեր 94.9 մլրդ դրամ, ինչը ենթադրում էր ամսվա ընթացքում իրացվելիության մոտ 3.0 մլրդ դրամի կրճատում: Ակնկալվող ավտոնոմ հոսքերը հիմնականում փողի առաջարկի ընդլայնման ուղղությամբ էին, որին համապատասխան էլ նախատեսվում էր իրացվելիության ավելցուկը չեզոքացնել բոլոր ներքաշող դրամավարկային գործիքների կիրառմամբ:

Մարտին դիտվել են փողի բազայի նվազման՝ սպասվածից ավելի արագ տեմպեր, ինչի արդյունքում փողի բազան մարտի վերջին կազմել է 93.3 մլրդ դրամ՝ նվազելով շուրջ 4.5 մլրդ դրամով: Ընդ որում, մինչև մարտի 28-ը փողի բազան կառավարվել է առավելապես տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի գերազանցումով: Պայմանավորված հարկահավաքման ակտիվ գործընթացով՝ ամսվա վերջին օրերին, որպես կանոն, արձանագրվել է ցուցանիշի կտրուկ նվազում՝ մոտ 3.8 մլրդ դրամով, և դրա մակարդակը մարտի վերջին գրեթե հավասարվել է միջակայքի ստորին սահմանին:

Փողի բազայի մեծածավալ նվազման վրա էական ազդեցություն են ունեցել նաև ԿԲ ՁԱԱ-ի կառուցվածքային շարժերը: Այսպես, Լինսի հիմնադրամից ստացվել է 1.1 մլրդ դրամ, այն դեպքում, երբ ծրագրված էր այդ միջոցների հաշվին ՁԱԱ-ի համալրում մոտ 4.0 մլրդ դրամով: Ամսվա ընթացքում իրականացվել է արտաքին պարտքի 2.1 մլրդ դրամի սպասարկում և շուկայում 2.4 մլրդ դրամի արտարժույթի վաճառք, որոնք հիմնականում ծրագրվածի շրջանակներում էին: Դրանց զուգահեռ ԿԲ-ն մեծ ծավալի փոխարկումներ է արել այլ հաճախորդների համար, որը ևս շեղում է առաջացրել ծրագրային ցուցանիշից: Մարտի սկզբին տեղի է ունեցել նաև ՁԱԱ-ի սպասվող 2.9 մլրդ դրամի նվազումը՝ ԿԲ-ում գտնվող կուտակային հաշվից հանվել է նորաբաց «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի գումարը: Արդյունքում, ՁԱԱ-ն մարտին նվազել են ավելի քան 7.2 մլրդ դրամով և կազմել 116.3 մլրդ դրամ:

Ի տարբերություն ԿԲ ՁԱԱ-ի, ՁՆԱ-ն ամսվա ընթացքում ավելացել են 2.8 մլրդ դրամով: Մասնավորապես, դրա կառուցվածքում զուտ այլ ակտիվներն աճել են հիմնականում կուտակային հաշվի միջոցների վերոնշյալ նվազման հետևանքով, իսկ բանկերի պարտավորությունների աճին նպաստել են բանկերի կողմից ԿԲ-ում ներդրված ավանդների ու նախորդ ամսվա ընթացքում կնքված հակադարձ ռեպո համաձայնագրերի մարումները՝ 2.5 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

Ինչ վերաբերում է Կառավարության հետ ԿԲ փոխհարաբերությունները կարգավորող ցուցանիշին, ապա դրա վարքագիծն այս ամիս ևս մեծապես պայմանավորվել է հարկահավաքման ամսական անհամաչափ բաշխվածությամբ: Ընդ որում, մարտին այդ անհամաչափությունն առավել չափով է դրսևորվել՝ պայմանավորված հարկերի եռամսյակային ծրագրի կատարմամբ: Արդյունքում, ամսվա վերջին Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդը հասավ անցած ամիսների համեմատ մեծ ծավալի՝ 10.2 մլրդ դրամի, իսկ զուտ պարտավորությունների ցուցանիշն անհամեմատ ցածր էր՝ -13.6 մլրդ դրամ:

Փողի բազայի կառուցվածքում 3.9 մլրդ դրամով նվազել են թղթակցային հաշվի միջոցները, որի մոտ 80%-ը բաժին է ընկել ամսվա վերջին օրվան: Ընդհանուր առմամբ, միջին հաշվով թղթակցային հաշիվների փաստացի մնացորդը 2.9 մլրդ դրամով գերազանցել է պարտադիր պահուստավորման միջին ամսական նորման: Ընդ որում, իրացվելիության ավելցուկը գրեթե հավասարաչափ է բաշխվել 14-օրյակների միջև, համապատասխանաբար՝ 3.1 մլրդ և 2.7 մլրդ դրամ: ԿԲ-ից դուրս կանխիկը մարտին փոքր-ինչ նվազել է, թեև պահպանվել է կանխիկի ամսական վարքագծի՝ նախորդ ամիսներին ձևավորված սեզոնայնությունը՝ արագ տեմպերով աճ առաջին կեսին (3.8 մլրդ դրամ), այնուհետև դրանց հետադարձ հոսք ԿԲ, ինչի հետևանքով այն նվազել է ավելի քան 4.4 մլրդ դրամով:

Մարտին դեռևս պահպանվել են փողի պահանջարկի նվազման միտումները: Այսպես, փողի զանգվածը[2] (առանց կուտակված տոկոսների) կրճատվելով 2.1 մլրդ դրամով՝ մարտի վերջին կազմել 182.7 մլրդ դրամ: Փողի զանգվածի կառուցվածքային տարրերից նվազել են դրամով ցպահանջ ավանդները (1.7 մլրդ դրամով), արտարժութային ավանդները (808 մլն դրամով) և շրջանառությունում գտնվող կանխիկը (722 մլն դրամով), որը մոտ 1.2 մլրդ դրամով չեզոքացվել է դրամով ժամկետային ավանդների աճով: Նշված շարժերի արդյունքում դրամային զանգվածը ևս նվազել է շուրջ 1.3 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 106.3 մլրդ դրամ: Արտարժութային ավանդների կառուցվածքում մեծածավալ նվազումը (1.5 մլրդ դրամով) բաժին է ընկել ցպահանջ միջոցներին՝ ուղեկցվելով ժամկետային ավանդների 637 մլն դրամ աճով:

---

[2] Դրամավարկային ամփոփ ցուցանիշների հաշվարկում ներառված են 22 բանկերի տվյալներ (մարտի սկզբից սկսել է գործել «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ն):

Ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազմարկիչը կազմել է 1.95, իսկ դրամային բազմարկիչը՝ 1.1, որոնք հիմնականում համընկնում են նախորդ ամսվա ցուցանիշների հետ:

Ֆինանսական շուկայում մարտին արձանագրվել է տոկոսադրույքների որոշ չափով բարձրացում, ինչը հատկապես արտահայտվել է ՊՊ առաջնային շուկայում: Ամսվա ընթացքում տեղաբաշխված ողջ ծավալում գերակշռել են միջինժամկետ պարտատոմսերը, որոնց գծով ձևավորվել է միջին տարեկան 16.15% եկամտաբերություն, այն դեպքում, երբ 9-12-ամսյա պարտատոմսերի եկամտաբերությունը ամսվա վերջին կազմել է 13.9%՝ նախորդ ամսվա վերջի 12.8%-ի փոխարեն: Առաջնային շուկայում տոկոսադրույքների աճի դրսևորումները փոխանցվել են նաև պետարժեթղթերի երկրորդային շուկա, որտեղ ևս իրականացված գործարքների եկամտաբերությունը բարձրացել է՝ 1.5 տոկոսային կետով և ամսվա վերջին կազմել 14.1%:

Համեմատաբար կայուն վարքագիծ են ցուցաբերել երկրորդային շուկայում կնքված ռեպո համաձայնագրերի (տատանման միջակայք՝ 7.7-8.1%) և բանկեր - տնտեսություն փոխհարաբերություններում ձևավորված տոկոսադրույքները (միջին կշռված մեծությունը՝ 18.5%):

Ելնելով շուկայական տոկոսադրույքների վերոնշյալ կայուն միտումներից, ինչպես նաև իրացվելիության ավելցուկի բավականին բարձր մակարդակի պայմաններում ՊՊ առաջնային շուկայում եկամտաբերության բարձրացումը համարելով ժամանակավոր, ոչ տևական դրսևորում՝ ԿԲ խորհուրդն անփոփոխ է թողել ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար - փետրվար*	*2003 թ. հունվար - փետրվարի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*Հունվար - մարտ[1]*	*2003 թ. հունվար – մարտի իրական աճի ինդեքսը 2002 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)[1]*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	111675.8	107.5	189432.1	111.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	103.4	-	103.9	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)* [2]	87.6	107.7	135.0	101.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	58344.5	107.9	90700.3	110.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1123.7	99.8	1626.5	101.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	20773.6	106.4	33515.3	106.7
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	76276.7	110.4	124179.4	110.7
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	8063.1	138.1	13914.9	133.2
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	117800.1	100.9[2]	196373.4	103.5[2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	131343.3	106.5[2]	210497.1	107.8[2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	27741.0	113.9[2]	28062.0	110.8[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1403.5	-	1403.6	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	127.5	-	127.6	-
Գործազրկության մակարդակը (%)	9.1	-	9.1	-

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար - փետրվար*	*2003 թ. հունվար - փետրվար 2002 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*Հունվար-մարտ[1]*	*2003 թ. հունվար-մարտը 2002 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)[1]*
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	85.5	111.1	132.8	110.6
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	168.5	127.1	256.8	125.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	83.0	149.1	123.9	146.9

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	104.1	97.0	100.0	100.2
Փետրվար	98.5	105.7	100.3	102.5
Մարտ	99.5	100.0	100.0	100.0
2003 թ. հունվար – մարտը 2002 թ. հունվար – մարտի համեմատությամբ	103.4	105.2	100.6	105.3

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2001*	*2002*	*2003*	*2003*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.6	2.2	4.1	4.1
Փետրվար	-0.9	-0.7	-1.5	2.5
Մարտ	0.0	-0.6	-0.5	2.1
Ապրիլ	-0.1	2.5		
Մայիս	1.6	1.7		
Հունիս	-1.3	-0.5		
Հուլիս	-2.7	-5.0		
Օգոստոս	-0.7	-3.0		
Սեպտեմբեր	-1.2	-0.6		
Հոկտեմբեր	0.1	0.5		
Նոյեմբեր	1.2	2.2		
Դեկտեմբեր	2.4	3.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.9	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.1	1.1		

V. Սպառողական գների փոփոխությունները

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ*[3]
	գների փոփոխությունը	նպաստումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	նպաստումը սղաճին (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	նպաստումը սղաճին (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ[2] (%)						
Հունվար	0.5	0.4	35.5	3.69	0.1	0.01	4.1
Փետրվար	-0.4	-0.3	27.0	2.81	0.1	0.01	2.5
Մարտ	-0.5	-0.4	23.6	2.45	0.1	0.01	2.1


[1] Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:
[2] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[3] Նշված երեք բաղադրիչների գումարը պետք է հավասար լինի սղաճի ներկայացված (վերջին սյունակ) ցուցանիշին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական կառավարության պետական արժեթղթերի	Կենտրոնական կառավարության պետական վարկերի	Տեղական ինքնակառավարման մարմինների պետական արժեթղթերի	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ իսկ/փոխարժեքային	ՀՀ տրցուղ. պետա-կան հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2002												
Դեկտեմբեր	0	3437	0	3437	12992	150	5	0	0	13148	-9711	***-9707***
2003												
Հունվար	0	1897	0	1897	14622	150	56	0	0	14828	-12931	***-12921***
Փետրվար	0	1791	0	1791	11839	151	105	58	0	12153	-10362	***-10366***
Մարտ	0	1744	0	1744	15150	151	7	0	0	15308	-13564	***-13617***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2002			
Դեկտեմբեր	13509	13148	26657
2003			
Հունվար	13953	14828	28781
Փետրվար	16032	12153	28185
Մարտ	16032	12961	28993



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված են 21 բանկերի ցուցանիշներ: Ընդգրկված չեն ՀՀ ԿԲ կողմից ժամանակավոր ադմինիստրացիա նշանակված կամ խնամակալության տակ գտնվող այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը չի համապատասխանում փողի սահմանման սկզբունքներին:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՕԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***123657***	***124388***	***123570***	***116338***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-12384***	***-24298***	***-25787***	***-23007***
Կառավարություն	-9711	-12931	-10362	-13564
Կենտրոնական կառավարություն	-9711	-12931	-10362	-13564
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	-58	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0
Բանկեր	10392	9642	4981	7500
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0
ավանդներ (-)	0	-750	-2360	0
Զուտ այլ ակտիվներ	-13065	-21009	-20406	-16943
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***108315***	***101173***	***98802***	***94870***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***111273***	***100090***	***97783***	***93331***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	92088	77756	78573	77965
Պարտադիր պահուստ. (դրամով)	18829	21959	18799	14920
Այլ հաշիվներ	356	375	411	446
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***21122***	***731***	***-818***	***-7232***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***274***	***-11914***	***-1489***	***2780***
Կառավարություն	-1816	-3220	2569	-3202
Կենտրոնական կառավարություն	-1816	-3220	2569	-3202
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	58	-58
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	0	0	0	0
Բանկեր	296	-750	-4661	2519
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0
ավանդներ (-)	0	750	1610	-2360
Զուտ այլ ակտիվներ	1794	-7944	603	3463
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***15896***	***-7141***	***-2371***	***-3933***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***21396***	***-11183***	***-2307***	***-4452***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	17973	-14332	817	-608
Պարտադիր պահուստ. (դրամով)	3359	3130	-3160	-3879
Այլ հաշիվներ	64	19	36	35
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***20.6***	***0.6***	***-0.7***	***-5.9***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-2.2***	***96.2***	***6.1***	***-10.8***
Կառավարություն	23.0	33.2	-19.9	30.9
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	1	-100.0
Բանկեր	2.9	7.2	-48.3	50.6
Զուտ այլ ակտիվներ	-12.1	60.8	-2.9	-17.0
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***17.2***	***-6.6***	***-2.3***	***-4.0***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***23.8***	***-10.1***	***-2.3***	***-4.6***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	24.3	-15.6	1.1	-0.8
Պարտադիր պահուստ. (դրամով)	21.7	16.6	-14.4	-20.6
Այլ հաշիվներ	21.9	5.3	9.6	8.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՀ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՀ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ուենցիա ոսկին= 349.3 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1]

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ – 03	Փ - 03	Մ - 03
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18286**	**15367**	**20373**	**24667**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	70982	83308	73718	75790
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-49365	-65466	-50842	-49028
Արտաքին պարտավորություններ դրամով	-3331	-2476	-2502	-2095
ԶՆԱ	**95940**	**94480**	**89127**	**83426**
Կառավարություն	10569	10626	9140	11246
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	11467	14600	13072	6943
Պահուստային ակտիվներ	22069	25121	23960	17895
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-10601	-10521	-10888	-10951
Տնտեսություն[2]	93993	89563	86579	87719
Ձեռնարկություններ[3]	63218	61063	57655	56514
Դրամով	19543	14356	14949	15137
Արտարժույթով	43675	43211	39497	38365
Արժեթղթեր	4130	3495	3201	3013
Տնային տնտեսություններ	30775	23523	24377	26083
Դրամով	7533	4261	4289	4495
Արտարժույթով	24641	19262	20088	21589
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64	71	77	75
Դրամով	64	64	64	62
Արտարժույթով	0	7	13	13
Այլ ֆինանսական կազմակերպություններ[4]	-	4907	4469	4943
Դրամով	-	3286	3077	3378
Արտարժույթով	-	1621	1393	1565
Զուտ այլ ակտիվներ	-20089	-20309	-19663	-22483
Արտաքին ակտիվներ դրամով	9	36	176	946
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	2494	1310	4571	1237
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-41	-163	-3496	-229
Ներդրումներ փայաբաժիններում	158	221	225	224
Միջբանկային պահանջներ	4997	4896	3476	6124
Այլ ակտիվներ	30380	29789	28314	29767
Միջբանկային պարտավորություններ	-4671	-4569	-3178	-5747
Դրամական շուկայի գործիքներ	0	-	-277	-479
Կապիտալ հաշիվներ	-42342	-43115	-42217	-45258
Այլ պարտավորություններ	-11166	-8714	-7258	-9068
ԱՎԱՆԴՆԵՐ	**114227**	**109847**	**109500**	**108094**
Դրամով ավանդներ	35190	32276	31931	31321
Ժամկետային ավանդներ	9508	10696	9978	11158
Ավանդներ արտարժույթով	79037	77571	77569	76773
Ցպահանջ ավանդներ	36853	34178	34580	33126
Ժամկետային ավանդներ	41836	43014	42594	43231
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	375	378	394	415

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[3] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[4] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Ձեռնարկություններ և կազմ.» տողում:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 02	Հ - 03	Փ - 03	Մ - 03
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***148902***	***139755***	***143943***	***141005***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***54236***	***45447***	***41491***	***42337***
Կառավարություն	963	-2305	-1222	-2317
Տնտեսություն [4,5]	94016	89584	86596	87739
Ձեռնարկ. և կազմակերպ.	67710	61063	57655	56618
որից՝ կուտակված տոկոսներ	1041	915	908	961
Տնային տնտեսություններ	26242	23543	24395	26103
որից՝ կուտակված տոկոսներ	500	499	512	525
Հասարակական կազմակերպություններ	64	71	77	75
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ [7]	0	4907	4469	4943
որից՝ կուտակված տոկոսներ	0	44	57	62
Զուտ այլ ակտիվներ	-40743	-41832	-43883	-43085
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [5,7]	***123897***	***107407***	***107600***	***106323***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***202588***	***184602***	***184788***	***182683***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [6,7]	***203138***	***185202***	***185434***	***183342***
Շրջանառությունում կանխիկ դրամ	88556	74980	75523	74801
Ցպահանջ ավանդներ [6,7]	26036	21954	22351	20608
կուտակված տոկոսներ	144	21	28	26
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ. [7]	88546	88267	87560	87932
կուտակված տոկոսներ	406	579	618	633
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ [7]	79038	77572	77582	76774
Ցպահանջ [7]	36854	34178	34593	33126
Ժամկետային [7]	41836	43014	42594	43231
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	347	378	394	415
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-9147***	***4188***	***-2938***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-8789***	***-3956***	***846***
Կառավարություն		-3268	1083	-1095
Տնտեսություն		-4432	-2988	1143
Ձեռնարկ. և կազմակերպ.		-6647	-3408	-1037
որից՝ կուտակված տոկոսներ		-126	-7	53
Տնային տնտեսություններ		-2699	852	1708
որից՝ կուտակված տոկոսներ		-1	13	13
Հասարակական կազմակերպություններ		0	6	-2
որից՝ կուտակված տոկոսներ		0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ		4907	-438	474
որից՝ կուտակված տոկոսներ		44	13	5
Զուտ այլ ակտիվներ		-1089	-2051	798
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [7]		***-16490***	***193***	***-1277***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		***-17986***	***186***	***-2105***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [8]		***-17936***	***232***	***-2092***
Շրջանառությունում կանխիկ դրամ		-13576	543	-722
Ցպահանջ ավանդներ [9]		-4082	397	-1743
կուտակված տոկոսներ		-123	7	-2
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-279	-707	372
կուտակված տոկոսներ		173	39	15
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1466	10	-808
Ցպահանջ		-2676	415	-1467
Ժամկետային		1178	-420	637
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ		31	16	21

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		**-6.1**	**3.0**	**-2.0**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		**-16.2**	**-8.7**	**2.0**
Կառավարություն		-339.4	-47.0	89.6
Տնտեսություն		-4.7	-3.3	1.3
Չեռնարկ. և կազմակերպ.		-9.8	-5.6	-1.8
Տնային տնտեսություններ		-10.3	3.6	7.0
Հասարակական կազմակերպություններ		-	-	-
Այլ ֆինանսական կազմակերպություններ		-	-	-
Զուտ այլ ակտիվներ		2.7	4.9	-1.8
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [7]		-13.3	0.2	-1.2
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*		-8.9	0.1	-1.1
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [8]		-8.8	0.1	-1.1
Շրջանառությունում կանխիկ դրամ		-15.3	0.7	-1.0
Ցպահանջ ավանդներ		-15.7	1.8	-7.8
Ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.		-0.3	-0.8	0.4
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ		-1.9	0.0	-1.0
Ցպահանջ		-7.3	1.2	-4.2
Ժամկետային		2.8	-1.0	1.5

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքով:

[3] ԿԲ-ի ԶԱԱ-երը հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար=584.89 դրամ, 1 ՀՓԻ=1.3546 ԱՄՆ դոլար, 1 եվրո=1.0376 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի= 349.3 ԱՄՆ դոլար:

[4] Նախկին աղյուսակների «Տնտեսության այլ ճյուղեր»-ում ընդգրկված հաշիվների մի մասը վերադասակարգված է որպես պահանջ ձեռնարկություններին, և այլ ֆինանսական կազմակերպությունների պահանջները հանված են ձեռնարկությունների պահանջներից, որի արդյունքում սույն տողի ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Բանկերի նոր հաշվային պլանում փոփոխությունների հետևանքով տնտեսության պահանջները դասակարգված են ըստ ներքին տնտեսության հատվածավորման սկզբունքների:

[6] Նախորդ հաշվային պլանով նման պահանջներ չեն նախատեսվել: Այլ ֆին. կազմակերպությունների պահանջները ներառվել են «Չեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[7] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[8] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[9] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2002	88556	25892	114448	9449	123897	78691	202588
2003							
Հունվար	74980	21933	96914	10494	107408	77194	184602
Փետրվար	75523	22323	97846	9754	107600	77188	184788
Մարտ	74801	20582	95383	10940	106323	76359	182682


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[4] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[5] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն դրամ
114500
111000
107500
104000
100500
97000
93500
90000
07.01.03
09.01.03
13.01.03
15.01.03
17.01.03
21.01.03
23.01.03
25.01.03
29.01.03
31.01.03
04.02.03
06.02.03
10.02.03
12.02.03
14.02.03
16.02.03
18.02.03
21.02.03
24.02.03
26.02.03
28.02.03
04.03.03
07.03.03
11.03.03
13.03.03
17.03.03
19.03.03
21.03.03
25.03.03
27.03.03
29.03.03
31.03.03
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
15000
0
99 00
01
02
03
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն դրամ
250000
200000
150000
100000
50000
0
99 00
01
02
03
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02
03



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
03
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2002	2003		
	Դ	Հ	Փ	Մ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	130616	124388	123570	116338
Առևտրային բանկերի ԶԱԱ	18286	15367	20373	24667
Ընդամենը	148902	139755	143944	141005
Կենտրոնական բանկի ԶԱԱ[3]	***131168***	***125064***	***124292***	***117131***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են նոր ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2002					
Դեկտեմբեր	97719	75215	100680	110572	195459
2003					
Հունվար	102694	76168	98593	109625	189066
Փետրվար	102953	80596	105414	114727	196179
Մարտ	98095	79126	102533	113021	191929


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին:

[2] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001 [3]	2002 [4]	2003		
	Դ	Դ	Հ	Փ	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	431.3	420.0	417.8	403.6
Համախառն միջազգային պահուստներ	333.2	441.7	430.4	428.2	413.2
Ոսկի	12.4	15.7	16.3	15.9	14.9
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	30.1	26.2	26.1	26.0
Արտարժույթ [2]	310.6	395.9	387.8	386.3	372.2
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***331.2***	***432.3***	***421.4***	***419.3***	***405.2***


[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2002 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.3595 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2002 թ. դեկտեմբեր, 2003 թ. հունվար և փետրվար ամիսներին «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[5] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

Ցուցանիշներ	2001[3]	2002[3]	2003		
	Դ	Դ	Հ	Փ	Մ
Վարկեր [1]					
Իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	26.7	20.7
ԱՄՆ դոլարով	20.3	19.4	18.9	20.2	20.2
Ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	30.2	22.5	22.5	25.6	27.2
ԱՄՆ դոլարով	35.5	33.5	34.6	28.7	35.9
Ավանդներ [1]					
Իրավաբանական անձանցից					
ՀՀ դրամով	15.0	8.3	7.8	8.5	7.9
ԱՄՆ դոլարով	9.7	2.0	4.3	2.3	5.7
Ֆիզիկական անձանցից					
ՀՀ դրամով	14.6	9.8	8.9	8.8	7.8
ԱՄՆ դոլարով	10.8	5.6	4.7	3.5	7.0
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	13.5	13.5	10.0	10.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	6.0	6.0	5.0	5.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	28.0	28.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	16.4	15.6	14.9	12.8	13.5
Սղաճ	2.9	2.0	4.1	-1.5	-0.5

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-02	Հ-03	Փ-03	Մ-03
1	-	-	-	-
2	585.81	-	-	-
3	585.81	-	585.46	588.85
4	586.51	-	584.65	588.99
5	586.51	-	585.52	-
6	586.15	-	584.70	588.99
7	-	585.10	586.00	588.85
8	-	586.63	-	-
9	586.44	579.03	-	-
10	586.79	582.48	586.41	589.25
11	586.92	-	586.10	589.88
12	586.92	-	585.89	590.23
13	586.35	582.48	586.23	590.93
14	-	582.48	585.81	591.53
15	-	582.17	585.81	591.53
16	585.51	581.00	585.81	591.53
17	585.15	582.00	585.96	591.76
18	584.88	-	585.96	591.76
